



ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՍԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՍԻՍ կը հրատարակուի ի Վ. Պոլիս, ամէն ամիս 1ին և 15ին:
Հասցէ՝ Վ. Պոլիս, Ղազարի խանութեան կամ:
Ձեռքէ կը ծախուի հատը 40 փարսյ:

Բաժանորդագիր

Պոլիս, տարեկան

Գաւառները

Օտար երկրք

մէկ մէծիտ:

մէկ քառորդ ոսկի:

վեց ֆրանք:

ԿՈՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 1 ՅՈՒՆԻՍ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այս տարի անցինք երկու յորեւեաներ գրական գործունէութեան. մայիսի 6ին՝ քսանեւհինգամեակն Պ. Գրիգոր Արծրունիի, մայիսի 13ին՝ յիսնամեակն Զ. Ղեւոնդ Վ. Ալիշանի:

Մինչեւ հիմա հայ ազգը կը տօնէր միայն զանոնք որք իրեն օգտակար եղած են կրօնաւէս. աշխարհականներու կրօնական ծառայութիւններն իսկ նուիրագործուած են կրօնքի անունով: Ազգային երախտապարտութեան պաշտօնապէս արժանանալու միակ պայմանը սուրբի արտփոսն էր:

Որքան ժամանակ որ հայ ազգը անհայտայն համոզում թէ՛ ինք լոկ կրօնական ժողովուրդ մըն է, այնքան ժամանակ ալ իր յարգանքն ու երախտապարտութիւնը պահեց կրօնաւորներու, կամ կրօնական ծառայութիւններ մատուցանողներու: Այլ երբ հասաւ այն ժամն, ուր, գաղափարներու փոփոխութեան անդխմաբեր չարիքին ներքեւ, սկսանք մտածել թէ՛ սխալ է այն համոզումը որ ժողովուրդ մը կրնայ կրօնական ժողովուրդ ըլլալ, ժողովուրդ մը միայն աշխարհական կրնայ ըլլալ, այն

տան մեր խռնկէն ու մոմէն մասն ու բաժին հանեցինք անոնց որք մեզ աշխարհական ծառայութիւններ մատուցած են ու կը մատուցանեն, որք նուիրած են զիրենք զօրացնելու մեր աշխարհական կեանքն: Սահմանադրութեան տարեգարձըն հաստատեցինք, Պէշիքթաշեանի գերեզմանին ուխտագնացութիւնն ըրինք: Մայիս 6ի և 13ի յօրեւաններուն առթիւ յայտնուած համակրական ցոյցերն եղան հանդիսաւոր և գիտակցական նուիրագործումն այդ գաղափարի:

Պ. Գրիգոր Արծրունի իր Մշակուրդ եղած է ներկայացուցիչ զուտ քաղաքական և աշխարհական գաղափարներու: Կրօնական ժողովուրդ մը պէտք էր անտարբեր ըլլար Պ. Արծրունիի: Հ. Ղեւոնդ Ալիշան պարզ կրօնաւոր մըն է և կը պատկանի քրիստոնէութեան այն եկեղեցիին որ տնորք թշնամի է քրիստոնեայ միւս եկեղեցիներու: Կրօնական ժողովուրդ մը անտարբեր, և մինչեւ խկթշնամի պէտք էր ըլլար Հ. Ղեւոնդ Ալիշանի: Սակայն ընդհակառակն ըրինք, զի Արծրունի է մեր նոր կեանքի առաջնորդներէն և Ալիշանի աշխատութիւնները մեր քաղաքական կեանքին կը պատկանին:

Սակայն այդ երկու տօներու առթիւ արտայայտուած համակրական ցոյցերու միջեւ հայ տարբերութիւն մը. Հ. Ալի-

չան չըջապատուեցաւ սղգային: Ընդհանրական համակրանքէ, խոյ տա Պ. Արծրունի ցոյց տրուած համակրական մեծ ցոյցը չունէր այդ ընդհանրական համագամանք:

Եւ չէ տք էր այսպէս բլլար: Աղգային նոր կեանքի մը անհրաժեշտ եղող նոր գաղափարներու ներկայացուցիչն է Պ. Արծրունի: Այդ գաղափարներու յաղթանակի համար Մշակի խումբը մեծ պատերազմի մտած է: պատերազմը կը շարունակէ. Մշակի խումբը հեազհետէ բանակ կ'ըլլայ, հին գաղափարներն օրէ օր կտոր կտոր կ'աներեւութանան, նոր գաղափարները կը յաղթանակեն, եւ սակայն անոնք զք պարտուեցան, բնականաբար անհաշտ թշնամիներ են Մշակի և մշակականներու. խոյ տալի մեծ թշնամիներն անոնք են որք կը տեսնեն թէ կորստի սպառնալից սաղագայ մը իրենց ալ կը պատրաստուի:

Մշակի և անոր խմբադրին գէ՛մ յայտնուած անտահման թշնամները մեզ դոհունակութիւն պէտք է պատճառէ. եթէ Մշակ չունենար իր գէ՛մ զօրաւոր թշնամիներ իր յաղթանակն անարժէք կ'ըլլար: Պ. Արծրունի պիտի նմանէր կատակերգութեան այն դիւցազն զօրապետին որ յաղթական կերպով կուգայ թատերարեմին վրայ. թշնամին սպաննած է, չեմ գիտեր ո՞ր անվտանգի կողմէն զարնելով:

—Պիւտին ինչո՞ւ չկորեցիր, կը հարցնեն:

—Է՛հ, երբ անոր գէ՛մն ելայ գլուխն արդէն կարուած էր, կը պատասխանէ:

Հետեւաբար Պ. Արծրունի յայտնուած համակրանքն անժխտելի տալացոյցն է յաւաքապիւնութեան զոր քրած ենք մէկ քառորդ դարի մէջ: Տարակոյս չկայ թէ քառորդ դար մը վերջ Պ. Արծրունի վայելած համակրանքն այնքան ընդհանրական պիտի ըլլայ որքան եղաւ Հ. Ալիշանին:

Իսկ Հ. Ալիշանի յայտնուած համակրանքն ընդհանրական է, մասն գի Հայր Ալիշան չմիջամտեր ժամանակակից կեանքի կուռին:

Հակասութիւն մը չենք քրած իրարու քով դնելով Ալիշան որ կը ներկայացնէ հնութիւն, և Արծրունի որ նորութիւնն ինքն է: Ալիշան և Արծրունի դաշնակիցներ են, ինչպէս որ դաշնակիցներ են հին

կեանքն ու նոր կեանքը:

Հ. Ալիշան կը ներկայացնէ ոչ թէ պատկերն մեր հին կրօնական կեանքին, այլ կը նկարագրէ այդ կեանքն այնպէս ինչպէս որ եղած է՝ կրօնական ու քաղաքական, կը գնէ այդ կեանքն այն չըջանալին մէջ ուր տեղի ունեցած է:

Արծրունի ցոյց կուտայ այն նոր կեանքն որ պէտք է մեզ. կը հրաւիրէ զմեզ հին այն չըջանալին մէջ ուր այդ կեանքը կրնայ արգիւնաւոր ըլլալ:

Անոնք որ կ'աշխատին նոր կեանքի զարգացումին մեծապէս կարօտ են հին կեանքի սձակցութեան:

Ժողովրդի մը պատմական անցեալ կեանքը կը նմանի գետնածուխի հանքի մը: Հին փոսած կոյտ մը որ առաջին տեսքով կը թուի անպիտան, դարերը փանցնելով ինչ որ օրուան թարմութիւնն էր, պատրաստած են այդ կոյտը: Այլ առանց այդ դարերու փոսութեան կարելի՞ էր յուսալ ժամանակակից յաւաքապիւնութիւնը: Թող զոյութիւն չունենար այդ հնութիւնը, և պիտի ունենայի՞նք մեքենան, չոգենաւն ու երկաթուղին: Այդ հանքածուխն է նաեւ ժողովրդի մը անցեալ կեանքը: Ազգի սիրտն ու միտքն առաջ տանելու հունն այդ հանքն է. երախտապարտ չըլլա՞նք այն հանքագէտին որ այդ թաքուն հանքերը մեզ կուտայ:

Հ. Ալիշանի յոբելեանը կրնանք համարել յաղթանակ Պ. Արծրունիի և իր դըպրոցին զի այդ յոբելեանն է նաեւ յաղթանակն խզի ազատութեան յարգանքի:

Հայ եկեղեցին խզի ազատութեան պաշտպանն է. կաթովիկ եկեղեցին չընդունիր խզի ազատութիւնը. մենք, առիւցիքս, չառ գերազանց ենք եւրոպացիներէ իբր քրիստոնէութեան խնամատէրներ: Եւրոպական ազգերն իրենց բացառիկ գիւրքովը, իրենց վայելած զանազան յաջողութիւններովն և իրենց քաղաքակրթութեամբը շատ յետամնաց են իրենց քրիստոնէական խնամատիրութեան մէջ մեզ նման փոքր խեղճ ժողովրդէ մը: Շատ ժամանակի կարօտ են որ գան հասնին այն բարձրութեան ուր կը գտնուինք մենք:

Մենք այնքան կը յարգենք խզի ազատութիւնը որ մինչեւ խոյ կը յարգենք

կրօնքն ու կրօնական խիղճն անոնց որք ոչ մեր կրօնքը կը յարգեն, ո՛չ մեր խղճի ազատութիւնը, ու դմեզ «դարձի բերելու» կ'աշխատին: Գերագոյն բարոյական է այս մեր կրօնական խնայողականութիւնը:

Սակայն Հայադաւան Հայ ժողովուրդը որ բնաւ չատեր կաթոլիկ Ֆրանսացին, բողոքական անգլիկացին և օրթոտոքս յոյնը, կ'ատէ այն հայը որ կաթոլիկ է կամ բողոքական է:

Այդ ատելութեան պատճառը բացատրել դժուար է: Երբ հայադաւան հայը կը տեսնէ որ կաթոլիկ հայը գինքը դժոխքի որդի կը համարի, երբ կը տեսնէ թէ՛ բողոքական հայը կը հնգնէ գինքն իբր տգէտ ու նախադաշարեալ, այդ հայադաւան հայը կը խռովի, կը վրդովի, կը զայրանայ, և կ'ատէ զնա որ չյարգեր իր էն սուրբ և էն նուիրական զգացումները, դաժաւարները, աւանդութիւնները:

Հայադաւան հայուն ատելութիւնը ընդդէմ այլադաւան հայուն ունեցած է նաեւ ուրիշ խորին պատճառ մը: Հայոց եկեղեցին համարուելով հայ ազգութեան պահպանն, ով որ կը բաժնուի այդ եկեղեցիէն կը համարուի դաւաճան մը ընդդէմ՝ ազգութեան:

Կրօնական ու ազգային այս ամէն դաժաւարները միշտ գրգռուած կը պահեն հայերն ընդդէմ միմեանց. Մշակի դպրոցն այդ ատելութիւնը բառնալու հետամուտ եղաւ ու կ'ըլլայ: Այդ դպրոց, որուն պետն է այժմ Պ. Արծրունի, կը ջանայ համոզել հայ ազգը թէ կրօնքը ժողովրդի մը պահպանութիւնը չ'ապահովցներ. կրօնք մը կամ ազգային եկեղեցի մը, կրնայ իր առաջնութիւններն ունենալ ուրիշ եկեղեցիի մը վրայ, կրնայ ազգային պահպանութեան տարերքներէն մին համարուիլ, բայց բնաւ չկրնար ըլլալ միակ պայման ազգային պահպանութեան. ուրեմն ով որ այդ եկեղեցիէն դուրս է՝ պէտք չէ զնա նկատել իբր բնական թշնամի մը ազգութեան:

Մշակի դպրոցը ջանաց համոզել հայադաւան հայն որ ինք պէտք է ներդրամիտ ըլլայ ուրիշ եկեղեցիներու պատկանող հայոց աններդրամիտ օգիւն: Քանի որ հայ եկեղեցին շատ աւելի բարձր է ուրիշ ու և է եկեղեցիէ, բնական է որ հայ եկեղեցին պարտաւոր է աւելի հեզ ըլլալ, աւելի

լի համբերող ըլլալ, եւ ջանալ որ իր քրիստոնէական սկզբունքները սիրով և քաղցրութեամբ ընդունել տայ ոչ-հայադաւան հայոց ալ:

Մշակ կատարելապէս հայ եկեղեցիի իմաստասիրութեան համեմատ քարոզեց:

Այդ դպրոցի յաղթանակն էր որով հայերն առանց կրօնական ատելութեան տօնեցին Հ. Ղեւոնդ Ալիշանը, եւ այն հայերն որք Մշակի անհայտ թշնամիներն են այդ թերթի քարոզութիւններուն համար, հետեւաբար չուղեցին մասնակցիլ անոր խմբագրին տօնախմբութեանը, այդ հայերն հպատակեցան Մշակի սկզբունքներուն և փութացին շնորհաւորել ջերմեռանդաբար Հ. Ղեւոնդ Ալիշանը որ կաթոլիկ է:

Սակայն կրնա՞նք ըսել թէ կաթոլիկ կամ բողոքական հայերն ալ յառաջադիմեցին մեզ չափ կրօնական խնայողականութեան մէջ:—Ո՛չ:

Արդարեւ անոնք եւս յառաջադիմած են, սակայն անոնք հիմնապէս սխալ վարդապետութիւններով տողորուած ըլլալով աւելի ժամանակի պէտք կայ որպէս զի կաթոլիկ և բողոքական հայերը մեզ դաժաւարակից ըլլան. մեզ անկ է ուրեմն աշխատիլ առանց յոգնելու, առանց վճատելու:

Սակայն եթէ լաւ դիտենք պիտի տեսնենք թէ կաթոլիկ և բողոքական հայերը մեր կարծածէն աւելի յառաջադիմած են ազգայնութեան գաղափարի մէջ: Արդէն բողոքական հայերն իրենց հայութիւնը չեն ուրանար, մենք ալ չենք կարող ազգութեան իրաւունքը զլանալ անոնց: Կաթոլիկ հայերն սրբան կը զարգանան մտքով այնքան աւելի կը յարին ազգութեան գաղափարին. տգէտ ժողովուրդըն է որ հայութիւնը կը համարի կրօնական մեղք. եւ եթէ տգէտ ժողովուրդը չունենար այդ համոզումը, կաթոլիկ կղերը բաւական դժուար կացութեան մէջ պիտի մնար:

Ապահովաբար մեզմէ շատ մը հարցնողներ ըլլան թէ՛ վտանգաւոր չէ՞ հայ եկեղեցիի համար խղճի ազատութիւն քարոզելը: Կը պատասխանենք, ո՛չ: Ընդհակառակը խղճի ազատութեան քարոզը

վտանգաւոր է կաթոլիկութեան համար :

Քրիստոնէութեան զանազան դատանանքներու մէջ կրօնափոխներն առուար մեծամասնութեամբ կաթոլիկներն եղած են , ինչպէս ցոյց կուտայ եւրոպայի վերջին մի քանի դարերու պատմութիւնը . բայց չենք ուզեր դուրս ելլել Հայոց շրջանակէն :

Վերջի երեսուն տարիներու կրօնափոխութեան հաշուեկշիռն եթէ ընենք կը տեսնենք որ մեր մէջն տգէտները կրօնափոխ կ'ըլլան , իսկ կաթոլիկներէ հայադաւան եզոզները միշտ զարգացեալներն են :

Եւ արդարեւ ո՛չ մէկ հայադաւան կրօնափոխ եղած է համազումով . կրօնափոխութեան շարժառիթները մեր մէջ բոլորովին կրօնքէ տարբեր պատճառներէ են . արտաքին , նիւթական , գէպքերն են որք կրօնափոխութեան պատճառ կ'ըլլան :

Ո՛չ մէկ զարգացած հայադաւան կրօնափոխ եղած է : Հայադաւան հայ մը որքան աւելի վարդանայ մօքով այնքան աւելի կը յարի ազատական դաժաւարներու , և ով որ կը յարի ազատական գափարներու բնականաբար հայոց եկեղեցին նախամեծար կը համարի կաթոլիկ եկեղեցիէն : Մօքով զարգացած հայ մը ի՞նչ պատճառ ունի իր եկեղեցին ձգելու և կաթոլիկ ըլլալու :

Տգէտ ժողովուրդը ոչինչ կը հասկնայ կրօնական նրբութիւններէ . անոր մտքին սնմանաչէլի են նուիրապետական կամ առաւածարանական խնդիրներ : Այդ ժողովուրդ երբ կրօնք կը փոխէ պարզապէս նիւթական պատճառի համար է :

Այս պատճառներուն համար է որ մեզմէ միշտ տգէտները , խեղճերը կրօնափոխ եղած են . իսկ կաթոլիկ հայերէն անոնք որ եկած են հայոց եկեղեցին , միշտ մօքով զարգացեալներն եղած են : Խիստ ցանցաւ բացառութիւն է՝ կաթոլիկ հայ մը որ նիւթական պատճառի մը համար հայոց եկեղեցին եկած ըլլայ :

Ուրեմն , երբ խնդիրն այս վիճակին մէջ է , մեր պարտքն է այնպէս դործել որ կաթոլիկ հայերուն զարգացած մասը միշտ շահինք : Իսկ երբ «շահինք» կ'ըսեմ , չեմ ուզեր ըսել թէ՛ կրօնափոխ ընենք զանոնք . ո՛չ . շահինք ազգային տեսակէտով :

Մենք կը կազմենք հայութեան մեծ կոճը , պէտք է որ մեզ հետ ըլլան զանազան դաւանանքէ հայոց սրտերը , և ամենքս միաձուլ ամբողջութիւն մը կազմենք : Երբ կը քարոզենք խղճի ազատութիւն , երբ ոչ-հայադաւաններու կը ճանչնանք ազգայնութեան իրաւունքը , առանց վարանելու կրնանք ըսել թէ՛ այդ ոչ-հայադաւաններու զարգացած մասը մեզ հետ մէկ սիրտ մէկ ոգի ընելու անսալ միջոցը գտած ենք : Իսկ երբ անոնք օր մը կը թողուն իրենց կաթոլիկ կամ բողոքական դաւանանքն ու մեր եկեղեցին կուգան մենք ի՞նչ կրնանք ընել : Մենք ո՛չ կ'ուրախանանք ո՛չ կը արտմենք . միայն իրողութիւնը սա է թէ՛ խղճի ազատութեան քարոզութիւնը առաջին միջոցն է որ մեզ կը մօտեցնէ կաթոլիկ և բողոքական հայերը . բայց սչ երբեք զմեզ կը հեռացնէ մեր եկեղեցիէն :

Վերջի քսան տարիներու մէջ մեր ունեցած այս ոգին շատ նպաստեց , կաթոլիկ հայերը գլխաւորապէս , ցրտացնելու կաթոլիկութենէ . միասին աշխատեցանք ազգային սովն դործերու մէջ . զիրար յարգեցինք ու սիրեցինք , իրարու կրօնական խղճի չգպանք . բայց մեր ազդեցութիւնը մեծ եղաւ կաթոլիկ հայոց վրայ . հիմա՛ , անոնց զարգացած մասը «լաւ կաթոլիկ» չը համարուիր : Այսպէս են աշխարհականներն , այսպէս են եկեղեցականները : Վեներաբիլ Միթրաքեանները չեն կաթոլիկութեան մատախաղարներն . այդ փառքը կը վայելեն «գովէճցիներ» կոչուածները :

Հայ կաթոլիկութեան ղեկավարները երբեք հաշտ աչօք չեն նայիր մեր ազատական ուղղութեան , չեն սիրեր մեր յարգանքն առ խղճի ազատութիւն . զմեզ կ'ուզեն տեսնել անհաշտ և աններող , որպէս զի հայ կաթոլիկները միշտ հեռի մընան մեզմէ : Ամէն անգամ որ մեր յարարութիւնները շատ բարեկամական կ'ըլլան հայ կաթոլիկներու հետ , հայ կաթոլիկութեան ղեկավարները կը գտնեն միջոց մը որով զմեզ իրարմէ ցրտացնեն : Օր մը կոնգակի խնդիր մըն է , ուրիշ օր մը գերեզմանատան խնդիր մը . կրքերը կը բորբոքին . միամտաբար թակարդին մէջ կ'իյնանք . կը կորսնցնենք մեր պապ արիւ-

նը, կը բարկանանք, կը զայրանանք, կը կռուինք. խաղը խաղ է. իրենց նպատակին հասած են զմեզ ցնդացնողներն:

Այդ ցրտութեան մէջ էինք երբ Հ. Ալիշանի յորեկեանն հասաւ. հայութեան այդ մեծ անունի ի լուր ոտուցանք ամէնքս ալ մեր կրքերն. յիշեցինք միայն հայ ըլլալնիս. Հայ կաթողիկոսներ տեսնելով մեր անսահման համակրութիւնն առ մի վարդապետ որ ջերմեանդ տարար կաթողիկէ, ըմբռնեցին թէ՛ մենք կրօնական ատելութիւն չունինք. ո՛վ որ կ'աշխատի ազգին համար մեզ համար միշտ մեծարելի ու սիրելի ու պաշտելի է: Մենք ա'լ չյիշեցինք հայ կաթողիկոսութեան պաշտօնական անձերու մեզ տուած վիրաւորանքներն. մեր սիրտը զմեզ մղեց դէպի Սուրբ Ղազար:

Մայիս 13ի օրն մեծ յաղթանակի օր մը եղաւ մեծ զգացումներու, մեծ դադափարներու: Ազգութեան դադափարի յաղթանակն էր, խզճի ազատութեան դադափարի յաղթանակն էր:

Իցէ՛ թէ այդ օրուան յիշատակը ոչ միայն մեր սրտերու մէջ անմեռ մնայ, այլ և յարատեւ յորդոր մը ըլլայ մեզ զգոյշ կենալու մեր թշնամիներու թակարդներէն, ինչպէս նաև անձուկ մտքերու տխմար թեւադրութիւններէն:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԻԶՄԻՐԻ ԱԶԳ. ՎԱՐՁՈՒԹԻՒՆ
ԵՒ «ԱՐԵՒ. ՄԱՄՈՒԼ»

Իզմիրի Ազգ. Վարչութիւնը զրկած է մեզ Պաշտօնական Յայտարարութիւն մը, նկատմամբ Աբէ. Մահալի: Չենք հրատարակել այդ Պաշտօնական Յայտարարութիւն, վասն զի ջերմ կռուակից ենք անսահման ազատ քննադատութեան ազգային ներքին գործերու մասին:

Անիրաւ խիստ քննադատութիւն, մինչև իսկ անխիղճ, անամօթ զրպարտութիւններ, այնքան չեն վնասեր ազգային գործերու որքան կրնայ վնասել քննադատութեան սահմանափակումը:

Այս համոզում, և լրագրութեան համերաշխութեան դադափարը մեզ չեն թոյլատրել հրատարակել Աբէ. Մահալի մեզ դէմ զրկուած յայտարարութիւնը: Սակայն Աբէ. Մահալի և անոր խմբագրութեան նկատմամբ մեր համոզումը, որ կրնանք ըսել թէ ընդհանրութեան համոզումն է, արդէն յայտնի է:

Պ. ՅՈՎՀ. ԱՅՎԱԶՈՎՍԵՐԻ

Ի ԲԱՐԻԶ

Պ. Այվազովսքիի ներկայութիւնն ի Կ. Պոլիս, ազգային դէպք մը համարուեցաւ: — Ազգային գեղարուեստական տաղանդ մը իր փառքին փառակից կ'ընէ, օտարներու հանդէպ, նաև այն ազգն որուն կը պատկանի ինք: Մեր ընթերցողներն անշուշտ գոհ պիտի ըլլան կարգաւոր Բարիզի կարեւորագոյն լրագրին, Թափ մէկ յօդուածը Պ. Այվազովսքիի վրայ: Այդ յօդուածի մէջ թէպէտ չէ յիշատակուած որ Պ. Այվազովսքի հայ է, բայց եւրոպոյ շատ զարգացեալ անձինք գիտեն Պ. Այվազովսքիի ազգութիւնը:

Իրա՛ւ որ, Բարիզ, որպէս երբեմն Աթէնք, արուեստից մայրաքաղաքն է:

Ամէն անոնք որ իրենց երկրին մէջ տիրացած են հռչակի՛ կ'ուզեն փորձել այս վերջին փորձը. — Բարիզի դատաստանը: Եւ իրենց ազգին մէջ ի՛նչ որ ալ ըլլայ իրենց փառքին ամրապնդութիւնը, մեզի կուգան գրեթէ գոգգողով, բարիգեան թատերարեմին վրայ վերստին կը գտնեն իրենց սկզբնաղբութեան օրերուն սրտայուզութիւնը, քսան տարեկանի անձկութիւնը:

Այն հռչակաւոր նկարիչը զոր Ռուսիա կը զրկէ մեզ, նորեկ մը չէ մեր մէջը, այլ հին ծանօթ մը: Եւ սակայն շատ նկարչատէրներ որք այս օրերս պիտի այցելեն Իվան Այվազովսքիի ցուցահանդէսը Տիւսան-Ռիւէլի ձեռնարկին մէջ, իրենք իրենց պիտի հարցնեն թէ առաջին անգամը չէ՞ որ կը ըսեն հռչակաւոր ծովանկարչին տունը:

Թող մեր ուռւ բարեկամներն, որք այնչափ իրազեկ են մեր փառքերուն, ներեն մեզ որ այնչափ քիչ տեղեկութիւն ունինք իրենց փառքերուն վրայ: Ֆրանսացին շատ շփացած է աշխարհիս չորս կողմերէն եկող այցելուներէն: Չափազանց անտեսուած է իր դրացիներուն բարբառները: Իր կոկորդը ճապուկ չէ, իր ականջը, որ կ'ըմբոստի գերմանական ելեւէջներուն դէմ, հիացմամբ մտիկ կ'ընէ ուստական երգին, բայց այդ երաժշտութիւնը իրեն համար շատ շոյտ է. և սահած անցած տեսներ չ'ձայնագրեր զայն:

Ուստի շատերուն զարմանք պիտի պատճառեմ՝ խմայնելով իրենց թէ Իվան Այվազովսքի, որուն անունը գիտէ բովանդակ Ռուսիա, որուն գեղարուեստական յաջողութեանց յիսնամեակը կը աօնէր երկու տարի առաջ ամբողջ Բեդրսպուրկ, ի Բարիկ ոսկւոյ միտալը չահած է 1844ին և 1857էն ի վեր Պատուոյ Լէգէոնի ասպետ է:

Բեդրսպուրկի Ակադեմիայէն ելլելէն ետք, որ 1839ին ատեններն ըլլալու է, Իվան Այվազովսքի եկած էր այցելել Իտալիա: Իր եւրոպական ուխտագնացութիւնն աւարտել ուզեց ի Բարիկ բնակելով, և Նկարահանդէսին մէջ իր երեւումը վերոյիշեալ փայլուն յաջողութիւնն ունեցաւ: Խրիմի պատերազմէն յետոյ երկրորդ անգամ եկաւ մեզի, և այդ ժամանակ գնաց մինչեւ Անգլիա, այցելեց Ուլիսիանոսի եզերքները:

Ծովը կը պարտէր նմա ամպրոպայոյց մորկի մը խնջոյքը: Լիովին տուաւ այդ խնջոյքը, գրեթէ մինչեւ նաւարեկութիւն: Իվան Այվազովսքին կրող նաւը, չէնքով և մարդերով կորսուած հաջակուեցաւ պահ մը: Եւ նկարիչն այս մտաին զբարձալի մանրագէտ մը պատմած է ինք:

Պ. Տիւռան-Ռիւէլի հայրն իր ճեմելիքին մէջ Այվազովսքիի մէկ քանի նկարներն ունէր: Մեծ գներով վաճառեց զայնըս, նաւարեկութեան լուրին վրայ: Սակարկութիւնը աւարտած էր երբ իրեն ծանուցին ծովն ազատած նկարչին այցելութիւնը:

—Այս կերպով է որ, կ'ըսէր ինձ անցեալ օր Պ. Իվան Այվազովսքի, իմ կենդանութեանս ուսայ թէ մարդ մը ս'ըջափ

կը շահի անհետանալով:

Եւ անշուշտ այս փորձառութեան դասն օգտուելու համար էր որ նկարիչը դարձաւ փակուիլ ի Խրիմ, Թէոդոսիոյ մէջ, յեզերս այն Սեւ ծովուն զոր կը սիրէ, զոր դիտած է իր ամբողջ կենաց մէջ և որուն առջեւ կը փափաքի մեռնիլ:

Սպասելով այդմ, Խրիմի կենսացնցող տրեւն, որ հունձքերը կ'ընէ այնքան խիտ ատոգալից, վերստին մեզ կը զրկէ զՊ. Այվազովսքի կրով և աւագով շաղախեալ գոռցես, բարձրահասակ, չիպ չիտակ, ուսերը լայն, մազերը գորշագոյն, և թաւ կիսամօրուքներուն մէջտեղ, ծովուն օդէն այրած դէմք մը, չարժուածքն և կեցուածքն ծովակալի մը հանգոյն: Աչքը, շատ թուխ, գրեթէ սոսիական, գիտախալ յօնքերուն տակ պահած է երիտասարդութեան բոլոր կրակը: Կը կարծէք թէ կորովի յիսնամեայ մըն է, մինչ Իվան Այվազովսքի եօթանասուն երեք տարեկանին կը մօտենայ:

Ուստի և իր աշխատելու արութիւնը բնաւ թուլացած չէ: Յանկին մէկ պզտիկ ծանօթութիւնը կ'իմացնէ թէ Տիւռան-Ռիւէլի ճեմելիքին մէջ ի տես դրուած քանակութիւն նկարները այս վերջին երեք տարիներս նկարուած են: Ահագին և անհունապէս հետաքրքրաշարժ ճիւղ մըն է այդ:

Իվան Այվազովսքի, ժիւլ Տիւրնէի պէս, կը վերաբերի դաշտանկարիչներու այն դպրոցին որք աւելի՜ իրենց յիշողութեան քան ճշգրիտ Նիւերու կը վստահին՝ նկարելու համար բնութեան մեծ տեսարանները: Քանի որ կարելի է ըսել թէ գեղարուեստական արտադրութիւն մը բնութիւնն է որուն վրայ աւելցած է մարդն, մարդ մը, արուեստագէտ մը, այդ նկարիչները՝ իտալական մեծ անկեղծութեամբ մը՝ ամէնէն մեծ տեղը կուտան իրենց զգացումներուն և իրենց ճաշակներուն: Եւեթէ այս մեթոտ կրնայ քիչ մը հոգ պատճառել ժամանակակից մտքին որ հետամուտ է բացորոշ ճամարտութեան, և թէ ծանր վտանգներու կենթարկէ գիմանկարիչները, կենդանագրերու և անասուններու նկարիչները, գերակշիւ կը հանդիսանայ երբ խնդիրը ծովուն չափ խուսափուկ, անշօշափելի և անորոշ տարր մը

նկարելու վրայ է :

Եւ որ ծովուն զխմացը ծնած եմ եւ ան-
միտիմար կը մնամ անկից հեռացած բլա-
լուս համար, տանտ չորս պատերը ծած-
կած եմ այն հրաշալի վայրկենական լու-
սանկարներով յորս ծովը կը թաւալի,
կ'ոտնու, կը յուզուի, կը փրփրայ, կ'ու-
նայ, գայլախաղ եւ աւաղ կը նետէ, կամ
կը փառուի լուսավառ ծերակերով որք հորի-
զնին խորէն կ'ոտոտասեն մինչեւ ծովե-
զերքը կոհակին կատարաց վրայ, եւ, տար-
ալուծութեան մէկ հնարքով, ճառա-
գայթարձակ միջօրէններուն կուտան լուսն-
կայի փաղիւռն երեւոյթը :

Ճերմակի, գորշի եւ սեւի այս դարմանա-
լան խառնակութեանց հանդէպ, աչքը կը
կը հարկադրի խոստովանելու թէ բնական
տեսարաններու պէսպիսութիւնը կը գե-
րազանցէ արուեստի ամէնէն յանդուգն
երեւակայութիւններն եւ թէ մարդ բնաւ
խրուռնք չունի ծովանկարի մը առջեւ ը-
սելու : Աւատիկ արհեստանոցի գիւտ մը,
կեղծ լոյս մը, մոտցածին կապակցու-
թիւններ :

Թէեւ ամէն ծովերն ալ նկարած է,
Քանի եւ Աթէնքի Միջերկրականը, Պիտ-
րիձի Ովկիանոսը, Սև ծովն է որ լաւա-
գոյն տեղը կը բռնէ Իգման Այվազովսքի
գործերուն մէջ : Ինքզինքը բոլորովին մօտ
կ'զգայ անոր հոգւոյն : Կը սիրէ անոր մե-
լամաղձութիւնները, ժպտը, չէրքէզուհւոյ
մեղկութիւնները, գեղանի գերուհւոյ
յուլութիւնը, ինչպէս եւ անոր յանկարծա-
կան զարթնումները, անոր կրքի եւ վայ-
րազ կատաղութեան պայթումները, անոր
սիրական հարձի մուգնութիւններն
որք ամէն արանց սրտերը կը դողացնեն,
մինչեւ վտարի կը նետեն խեղդուածներ
եւ բեկորներ :

Այվազովսքի նկարներուն մէջ պիտի
գտնէք նաւակներ որք կը սահին, ծովա-
հէններ որք կը նաւեն առաքատուոյց,
պալատներ, սպիտակ քաղաքներ որք կո-
հակներէն վեր կը բարձրանան : Բայց միշտ
ծովն է մեծ եւ գլխաւոր գերակատարը,
թո՛ղ երեւի նա մեղմ ու հանգարտիկ,
ետի-Պուլիի դիւկին ստորոտը բոլորածիր,
Վոսթորի մէջ փայլանջելով Տոբա-Պալչէի
պալատը, կա՛մ ծեծելով Կովկասի եւ Խրի-
սի եզերքը, Քոսթէպէլի երկիրը, Այու-

Տաղ հրուանդանը, Էլպուսի փլուզումը :

Նոյն իսկ այն ճշմարտագէտ հրաշալի
նկարին մէջ, որ ցուցահանդէսին մէջ ա-
մէնուն աչքն իրեն պիտի հրապուրէ,
Գերաշէն Վայրկան Ուլեանսին վրայ, բնկղ-
մաղ նաւն եւ մարդիկը կ'որոտած ու պա-
շարուած կը մնան կոհակներուն մուգնու-
թեան մէջ, ուշադրութիւնը կը յառի ա-
ւելի՛ Ովկիանոսին որ կուլ կուտայ քան
մարդոց որք պիտի անհետանան : Եւ տարա-
ւորութիւնն աւելի դրաւիչ ու ահագին
կ'ըլլայ՝ թատերական ու ողբերգական
տարրին աչսպէս ի բաց մնալովը :

Փրփուրի այդ զարմանահրաշ եռացման
հանդէպ՝ որ կոհակները կը միացնէ կը
յօգէ ամպերուն, անոնց կատաղութիւնը
կը բարձրացնէ մինչեւ երկինք, Բաթքալի
մատածումը մարդուս յիշողութեան մէջ
կ'արթննայ : «Մարդս եղէ՞ք մըն է լոկ,
բնութեան ամէնէն տկարը, բայց խոհուն
եղէ՞ք մը : Պէտք չ'կայ որ տիեզերքն
ողջոյն զինուի զայն ջախջախելու համար :
Գոլորշի մը, ջրի կաթիլ մը կը բաւէ զայն
սպաննելու : Բայց նոյն իսկ երբ տիե-
զերքը զինքը ջախջախէ, մարդս զինքն
սպաննողէն աւելի վնաս կ'ըլլայ, որովհետեւ
ինք գիտէ թէ կը մեռնի եւ թէ տիեզեր-
քն ի՛նչ առաւելութիւն ունի իր վրայ :
մինչդեռ տիեզերքը բան մը չգիտեր :»

Աստիք միայնակեացի մատածումներ
են, քրիստոնէի սրուն հոգին հրաժարած
է աշխարհէ, եւ Պ. Այվազովսքի սրտո-
յոյզ նկարին թողած տպաւորութիւնը բո-
լորովին տարբեր է, թէպէտ, բոլորովին
ներհակ տեսակէտներէ, այդ երկու երա-
գատեաները նոյն խնայատարական եղբա-
կացութեան կը յանդին : Ո՛վ մարդ կային
ունայնութիւն : Պէտք եղածին չափ հե-
ռու կեցէք որպէս զի չ'լսէք ընկզմալ մար-
դուն ազազակը, որպէս զի չ'տեսնէք անոր
դէմքին եղբրական արտայայտութիւնը,
եւ աշխարհիս թագաւորին այդ անհետա-
ցումն այնչափ անտարբեր պիտի ըլլայ
ձեզի համար որչափ անտարբեր է ստո-
ղերուն համար որք պահ մը քօղարկուած
են փոթորիկէն, որչափ անտարբեր է ա-
նողքը, անգութ, անզայրոյթ, անյիշա-
տակ անհունին համար ուր գիտակից միտ-
քը կ'ընկղմի :

1859ի մարտին վրայ Միշլէի գրած էջե-

ընդ գիտեմ միայն որք ուսն ծովանկարչին այս նկարին չափ ինձ զգացնել տուած ըլլան մարդուն անկութիւնն հանդէպ տարերայն .

«Շատ մըրիկներ տեսած էի, կ'ըսէ Միշկէ : Մըրիկներու հազար նկարագրութիւններ կարգացած էի, եւ ամէն բանիկ'սպասէի : Բայց ոչ մէկ բան գուշակել կուտար այն տպաւորութիւնը զոր այս մըրիկը թողուց իր երկար տեղութեամբ, յարատեւ ուժեղութեամբ, անողորմ միօրինակութեամբ : Երբ առաւել կամ նոյն ազբան մը կայ, դադար մը կամ սաստկացում մը, վերջապէս զանազանութիւն մը, հոգին եւ զգայարանքներն անդ կը գըտնեն թան մը որ սրկումը կը թուլցնէ, կը թեթեւցնէ, որ կը պատասխանէ անոնց փոփոխութեան անդխմադրելի պէտքին : Բայց հոս, հինգ օր հինգ գիշեր անընդհատ, առանց յաւելման կամ նուազման, միեւնոյն կատաղութիւնը տիրեց եւ ահաւելոյն մէջ ոչինչ փոխուեցաւ : Ո՛չ որոտում, ո՛չ ամպերու սլաքար, ո՛չ ստատառածք ծովու : Առաջին անգամէն, գորշագոյն մեծ վարագոյր մը ամէն կողմէ գոցեց հօրիզոնը . թաղուեցանք այդ մոխրագոյն պտտանքին մէջ, որ ամէն լոյս չէր արդէւրէ՛ք եւ թոյլ կուտար տեսնել կապարէ եւ կրէ ծով մը, վայրագ միօրինակութեամբը նոյնալի եւ թախծալից : Ետացող մեծ կաթասայի մը ունացումն էր որ կը տիրէր միշտ : Ոչ մէկ արհաւիրակից բանաստեղծութիւն նոյնքան պիտի ազդէր որքան այդ արծակը : Միշտ, միշտ նոյն եղանակը . Հէ՛հ, հէ՛հ, հէ՛հ կամ Ի՛նչ, Ի՛նչ, Ի՛նչ :

«Մնացաբար կը գիտէի՝ այդ ծովը, տեսելութեամբ կը գիտէի : Տգեղ ու ժանտատեսիլ էր : Այդ ծովուն ոչ մէկ բանը կը յիշեցնէր բանաստեղծներուն սին նկարագրութիւնները : Միայն թէ, տարօրինակ հակապատկերով մը, կ'զգայի թէ՛ջ ո՛րչափ ես նուազ կ'սպրկամ, նոյնչափ նաքաջաւորջ տօրելու երեւոյթն ունէր : Սոսկալի ամբսի մը, զարհուրելի խուժանի մը տպաւորութիւնը կ'ընէր իմ վրաս, ո՛չ թէ մարդոց խուժանի մը, այլ հաջող շուներու, մէկ միլիոն, մէկ միլիոն կատաղի դամիւններու կամ մանաւանդ խեղճարներու, զազրելի եւ անանուն երե-

ւոյթներու, աշտպուրի եւ անականջ գաւաններու որք յիշերակից երախներ ունին լոկ : Ի՞նչ կ'ուզէք, ճիւղալներ : Երբեք չէ՞ք նաւարեկութիւններով որոց լուրերն ամէն կողմէ կը հասնին : Ի՞նչ կ'ուզէք, — Բու մահդ եւ տիեզերական մահը, երկրին ոչնչացումն եւ վերագարձն ի քսոս : »

Իր տարածութեան անհունութեամբը չէ միայն որ ծովը համեստութեան անագորոյն դաս մը կուտայ մեզ : Զմեզ կ'ընի՛ճէ նաեւ իր ժամանակին անհունութեանը ներքեւ : Կը յիշեմ որ խնայած եմ կիւսգալ Գլոպէսի բերնէն Շաղոպլիտանի մէկ խօսքն որ սա գլխաւորութեամբ կ'սկսէր .

«Ո՛վ վաղնջուց տիրունք ծովու . . . »

Այս վաղնջ ածականը կը հիացնէր բառերու խելայեղ սիրահարը : Այդ բառին մէջ կը տեսնէր ինչ որ ճշգիւ կայ անոր մէջ, այն մոտածումը թէ, ամենայնի յաւիտենական փոփոխութեան մէջ, ծովն է միայն որ չ'փոխուիր : Ո՛վ կրնայ ըսել, «Երկու դար առաջ այսպէս էր այս երկրին կերպարանքը : » Լեռները կը փլնէ, հովիտները կը լեցուին, հրաբուխները կը մարին, գետերը կը փոխեն իրենց ընթացքը, անտառները մոխրի կը վերածունն, աւերակները կը թաղուին հոն ուր քաղաքներ կը խժային, քաղաքներ կը կանգնին հոն ուր մենութիւնը կը տիրէր : Բայց տիեզերքին այս մշտնջենական կերպարանափոխութեան մէջ, շարժում մը, ներգաշնակութիւն մը կայ որ բնաւ չ'փոխուիր : Այս ծովն որ մեր ոտքերը կը թրջէ, ճիշդ այն ծովն է որ իր կոհակաց վրայ կրեց հնարամիտ Ուրիսեոսի նաւը, այն ծովն ուր առաջին մարդիկ, ամայի տիպանց վերայ մերկ, սոսկիմոք տեսան լիջնելն առաին արեգակաց պայծառութեան :

Անցելոյն այդ երազն, ուր կը փոխադրեն զմեզ ջուրերուն տեսարանն եւ տարիքին մեղմազնութիւնը, Իվան Այվազովսքի ունեցած է այդ երազն իր սիրական Սեւ ծովուն եզերայ վրայ : Եւ օր մը երբ իր տոջեւէն կը սահէր յաւնական առաքատանաւ մը՝ ցուկն եւ խելքն յառաջակարկաւ, ստագոտոր ծիրաներիւն վերջալոյսի ճառագայթներով, կարծած է թէ կը տեսնէ անցնիլն ամէն նաւերու նախապալին, նախնի Արթուրին, զոր Յուստան զրկեց դէպի Կոլքիդ, Ասիայէն

խնդրեւում համար իր մոգերուն գաղտնիքը :

Ուրիշ օր մը , Վեսուվի ստորոտը , երազած է Պոմպէյի ընկուղումը . ուզած է նկարել քաղաքը՝ հրդեհի վարագոյրին մէջէն , փոշիի և քարերու այն տարափին մէջ որուն վրայ կը խօսին Պլինիոս Կրտսերի նամակներն առ Տակիտոս .

«Արդէն մոխիրը կ'սկսէր տեղալ : Գլուխս դարձուցի և ետիւ տեսայ թանձր մուխ մը որ զմեզ կը հալածէր , և հեղեղի մը պէս կը տարածուէր երկրին վրայ »

Այս անգամ եւս , Այվազովսքիի փորձութիւնը չարժող բանն եղած է տարերաց պայքարը , կրակին և ջուրին կոխը . մարդուն յիշատակն ի մէջ բերուած է լոկ իբր վկայութիւն մը իր գործին ունայնութեան , պալատներով որք պիտի անհետանան , մակոյկներով որք սրարչաւ կը փախչին :

Արուեստագէտ մը որ կէս դարէ աւելի է կ'ապրի այս հայեցողութեանց մէջ , պայծառ մտքով կը գրաւէ խնայողութեան նաւահանգիստը : Կարելի է անխնայ դըրուատել զինքը , որովհետեւ դրուատիքն իրեն համար վտանգաւոր չէ : Ուստի եւ այն սքանչացողները զորս վարպետն ունի իր երկրին մէջ՝ զգացնել տուած են մեզ թէ ինչ մեծարանք կ'սպասեն մեզնէ իրենց մեծ մարդուն համար : Նկարչին ջերմեռանդ հիացողներէն մին — Բրոֆէսոր Վլատիսլավիլէֆ — այս օրերս կ'աւազարկէր Սեւ ծովուն անունը փոխել և ի վան Այվազովսքի կոչել զայն :

ՀԻՒԿ ԼԸ ՌՈՒ

ՈՂՋ-ՄԵՌԵԼԸ

— «Ննթաղէ՛ , մա՛րդ , որ ցոյութեան մի գիշեր

Անցունելով , երբոր ուրախ դառնաս տուն Ու քընանաս . խոր թմրութեամբ քու ա-

չեր
Փակուին , ամէնք մեռա՛ծ կարծեն քեզ
առտուն . . . »

Պչրի աղջիկդ հայելւոյն մէջ . կինդ՝ անսիրտ

Ու խարերայ՝ հեգնող չրթամբ , ճակտիւցած ,

Խորհի . «Նետե՛ն պիտի զայն մէջ փոսին բիրտ . . .

Շո՛ւտ , ո՞ր սաւան մ' և գուլպաներ կան հինցած . . . »

Աղտոտ , անշահ մոմ մը դընեն՝ մերկ ու սին

Սեղանին վրայ , պատանք փաթթեն քեզ իսկոյն ,

Եւ՝ մինչ ներս դուրս կուգան կ'երթան ու խօսին ,

Դու՝ անկի՛ւն մը մընաս մինա՛կ ու տըժդոյն :

Հսպասուհիդ — զոր սիրէիր . . . — կ'աղօթէ ,
Խոնջ , ձանձրացած , հանէ միմունջ մը ձապող .

Չափդ առնելով՝ ատաղձագործն յայտնի թէ՛

Կրնայ շինուիլ կաղնեփայտէ լաւ դադաղ :

Եւ մինչ կաղնւոյն՝ եղբորորդիդ հաւանի ,
Պիտի գոչէ սիրուն զուսկիդ հարազատ թէ՛ «Դրամ չահիլն է դըժուարին ա՛յնքանի ,

Եւ թէ արդէն պարզ չոճեփայտն իսկ է շատ »

Եւ պիտի՛ ընտրեն սնտուկ մ' ա՛յնքան անսիրտան

Որ չը բռնէ և ո՛չ մի դամ հաստատուն .
Պատուհանին փեղկին վըրայ ալ քու տան ,
Որդիդ իսկոյն պիտի գըրէ . Վաճ՝ Տա՛ն :

Յետոյ , բեռ , հա՛կ երկարածեւ , մինչեւ վար ,

Չարնըւելով դըրանց , պատին , սանդուխին ,

Պիտի փողոցն իջնես՝ միշտ լուռ և երկար՝
 Ի տես ծաղրող և անտարբեր ամբոխին :

Դադադարարձք ալ, կարմըրած, քրանա-
 թոր,

Արեգակուն հընոցարուղի չաղին տակ,

Պիտի հայհոյեն ու մըրմըռան. «Ա՛լ ան-
 դորր

Գընա փրտիլ և որդենտիլ, չա՛ն սա-
 տակ . . . »

Կզերն հեծեղով. «Մահն է կենաց ճանա-
 պարհ . . . »

Դանդաղ կ'երգէ զի ստակ արւած չեն
 բազում :

Եւ անոնք որ տեսնեն անցնիլդ յամրաբար
 Պիտի ըսեն, «Այս ի՛նչ անչուք, խեղճ թա-
 դում» :

Մեռելակառքն ալ պիտի երթայ շա՛տ կա-
 մայ,

Սողալ՝ ալիս, ճըսընչմամբ, ծանր, տ-
 հարկու :

Որ չը խրաչի՛ ձին, շարշաւէ ըստ քրմաց
 եւ չըլլայ ճաղդ ալ մէ՛ջտեղէն ճիշդ եր-
 կու . . . :

Եկեղեցւոյն մէջ մի գինով կամ ժամկոչ
 Պիտի զանգակն հնչեցունէ, և բլբլեր
 Պիտի արթննան ու ճիչերով տիրադոչ
 Գան թըռչըրիլ սև սնտուկիդ քոյնի վեր :

Յուզարկուոր սրաղէ՛մ մարդոց առջեւէն
 Խեղճ աղքատ մը պիտի տանի խեղճ մի
 խաչ,

Եւ շատեր ալ պիտի խորհին. «Ա՛լ բաւեն . . .

«Սա անկիւնէն կրնա՞նք կծկել ժա՛մ մ'ա-
 ուջ . . . »

Եւ վերջապէս կը հասնին բաց փտիլդ քով,
 Ապաղային նըման լըռին ու մըթին,

Որ՝ անդ՝ տհե՛ղ երախ, հեզնող, յաղթ
 տեսքով,

Թըւի սպասել փակման ժամուն հուսկ յե-
 տին :

Կարճ «Հօգ» է մ'ետքն, որ բաշխէ քա-
 հանան,

Կ'իջեցունեն, կը՛սուսի . . . կը սահիս ծուռ
 շիտակ,

Ընդոտ շարժմամբ չըւանն հանել կը ջա-
 նան,

Վեր քաշեն զայն. — կը տարածուիս փոսին
 տակ :

Քիչ մ' օրհնած ջուր սրակեն ձեռամբ դո-
 ղահար,

Քիչ մ'ալ կարգան, և, բշտապմամբ ակ-
 ներեւ,

Կը լեցունեն լիարահ հող, խիճ ու քար,
 Ճերմակ փայտէ վերարկուիլ ի վերեւ :

Փոս փորոցն՝ որ կ'ուզէ չուտ դործն ա-
 ւարտի՝

Խաչդ հողին մէջ մըթէ՛ արագ ու ժպտուն,
 Ծաղրաբան զոյգ մեռելաթաղք ալ լկտի՝
 Փութով մոնեն մի մերձակայ գինեատուն :

. . .

Արդ, այս ամէն բաղխի քընոյդ անաւոր
 Եւ ջախջախի ջուրց պէս ոյց գէ՛մն ելլէ
 խութ :

Սակայն դարձմամբ մ'եղբրական, ահա-
 ւո՛ր,

Պիտի բացուին աչքդ ի մահճիդ ցուրտ ու
 մութ :

Յայնժամ, գէպ ի մէջքդ երկարած սեղ-
 մագին

Երկու թեւերդ անգոր, նիհար, ըսպիտակ,
 Գալարելով պիտի ընդհարին տախտակին

Ու ցա՛ւ ըզլան պատանքիդ լայն ծալուց
 տակ :

Մինչ սըրունքըդ, սարսուռներով ահուկի
 Պիտի ցնցիլ զարնըւելով կափարջին,
 Խեղցեղ միտքդ, արհաւրանօք, սոսկմամբ
 լի,

Պիտի անգնդաց ու թուխպերու մէջ շրջին . . .

Նոր թարմ փայտի, կաւի և հին պատտառի
 Դանր հոտ մ'անդուլ տանջէ պիտի քեզ,
 մինչդեռ

Պիտի թոքիդ մէջ տակաւ չունչդ ըսպառի,
 Պայթի ուղեղդ ու պիտի ոռնա՛ս, կիտա-
 մեռ :

Այլ խուլ հեծիւնքդ ու ճիշդդ անլուր
 պիտի մնան

Անպատասխան՝ նոր տանըդ մէջ ժանա եւ
 լուռ,

Ոյր տանիքէն, ըսպունդ-քարի յար նը-
 ման,

Պիտի վըրադ կտի՛ն պա՛ղ պաղ թորեալ
 ջուր . . . :

Եւ վայրկեան մ'ալ յորում մահուան գէ՛մ
 դաժան

Մաքառի կեանքդ, ընկճեալ այլ դեռ ան-
 պակաս,

Պիտի կարծես թէ՛ իրտի միտք, և վրժան
Որդք... և որդոց սուր խայթուածքն
ալ պիտի զգա՛ս...

Պիտ՝ ունենաս դարձ մը, զի՛ղջ մ'ալ ա-
նագան,

Քանզի հոգիդ՝ այսահարեալ, բազմախոց,
Չարչարանաց ու տանջանաց մէջ ա՛յսքան՝
Պիտ՝ համոզուի և հաւատաց դժոխսո՛ց:

Մինչ ընտանիքդ՝ արծաթապաշտ, մո-
ւացկոտ,

Վէճի, խնդրոյ նիւթ պիտ՝ ընէ քու կը-
տակ,

Ծեր նոտար մ'ալ, գըրիչն առած, անոնց
մօտ

Քառնէ հաշիւն անվերջ թըւոց շեղձին
տակ,

Դու, անտուկիդ մէջ, առանձին, ամրա-
փակ,

Պիտի մընա՛ս, հէգ գիակ ո՛ղջ տակաւին,
Անշունչ, անձայն, անաչք, մարմինդ՝ անդ

տափակ,
Բերանարաց, բուռնցքդ ալ բացուին ու
գոցուին...

Եւ վերջապէս պիտ՝ անդամներդ երկարին,
Սառած, մի սառ անշարժութեամբ, հո-

ղին տակ,
Եւ վերջին շունչդ, յաղթ խորհրդով խա-

ւարին,
Անհունն ի վեր պիտի սլանայ շի՛փ շիտակ:

ՄՈՌԻՍ ՌՕԼԻԻՆԱ

Թարգմ.

ԱՂԵՔ. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

ՊԱՆԴՈՒՄՏԻ ԿԵԱՆՔԷՆ

ՍԱՐԶԱՆ

ՍՐԲԱԶԱՆԻՆ ԺՊԻՏԸ

Նուրբ էր հասակաւ, նիհար ու քաշ-
ուած. տոգոյն ճակտին վրայ դէմ առ
դէմ աղեղնաձեւ կ'երկարէին երկու բա-
րակ յօնքեր. տարիքն հազիւ 16, դուր-
սէն գրեթէ նոր եկած: Հայերէն բաւա-
կան լաւ կը խօսէր, գիրք ու թերթ տե-
սած էր, և հասկցող այնչափ, որչափ կը
ներէին իր տարիքն ու դուրսեցի բլաւը:
Տէրտէրի գալոց գացած էր, բառեր գի-
տէր, մանր ու մեծը գաղափարներ ու-
նէր: Սոնարհ դէմքի և կամ առերեւոյթ
հանդարտութեան ներքեւ կը տածէր
բուռն զգացում մը, զպրոցի սէր, որ
զինքը խլած էր մայրենի գրկէ և յօտու-
րութիւն նետած:

Բայց եկած էր ի Կ. Պոլիս՝ Էջմիածին
ուղեւորելու համար. — Ճեմարանի անունը
զինքը հրապուրած էր. ուստի հո՛ն և ո՛
այլուր: Երկու ամիս խոշոր անուններ
կ'ուսնի այստեղ, և կ'որոյ՛է Էջմիածնի
ճանթներուն գիմում ընել. այլ եւս
գիտէր Ս. Երրորդութիւն, Ս. Լուսաւո-
րիչ, Ս. Թագաւոր, Գում-Քաբուի Ս. Աս-
տուածածին, և կ'սկսի փորձերու... Տեո-
նենք ի՞նչ պահել էր ճակատագիրն այդ
գաւառացի ուսանողին:

Ա.

Կիրակէ մը, ժամէն ու ժամաւորէն
ետքը, Սրբազանին սենեակը կը մոնէ
գողդալով: Ի՛նչ անուշիկ յուսով ոտք
կը դնէր սեմին վրայ. Էջմիածնի ճամբան
ա՛լ հարթուած էր, թղթերու վրայ տե-
սած Կաթուղիկէն իր երեւակայութեանը
առջեւ կը մարմնանար կարծես: Ս. աջը կը
համբուրէ. ժպտուն էր Սրբազանը, եւ
այս երևոյթն իրեն բարեգուշակ թուեցաւ:
Համառօտ տեղեկութիւն կուտայ իր
անձին ու փափաքներու մասին. կը յայտ-
նէ որ ասիական խորերէն եկած է, կեան-
քի ծրագիրը պատրաստած է իրեն և միակ
փափաք մը ունի, — Էջմիածնի ճեմարանը

դրկուի իրբեւ ուսանող։ Սրբազանն իր ձանձրալի ժպիտներովն, որ փակած կը մնային իր երեսի հաստ կաշիներուն վրայ, քանի մը ցուրտ պատասխաններ կուտայ, մերթ ընդ մերթ քահ քահ փրցնելով այն յանդուգն գաղափարներու և անզուսպ տենչանքներուն, զորս կրցած էր ունենալ այդ դրսեցի պատանին, աղտոտ հագուած եւ չոր ոտկորներով։ Կէս ժամ անցած էր արդէն։ յամառ եւ անամթ ժպիտներուն հետ՝ Սրբազանին ցուրտ ցուրտ բաւերն ա՛լ կը ծանրանային իր վրայ հեղձուցիկ օդին պէս, ուստի տէքերն ալ դրան կողմը կը դառնային սոսկալ։ Ելաւ մեկնելու անոյս, Տիրուրութիւնն իր ճակտին վրայ ուրուստիս կը նստէր։ Սրբազանին երեսը դարձեալ ժպիտ։ Երկու սպանութիւն կրեց. — անյուսուցիւն և ժպիտներու դառնութիւն։ Այդ օրէն սկսեալ կը փախչէր Ֆարհատ ժպիտներէն այնպէս, ինչպէս յիմարները կը փախչին իրենց պետէն մինչ ճոկանն երեւցնելով յանկարծ կ'երեւի արգելոցին ստուերախառն մթութեան մէջ։

Ֆարհատի ծրագիրը բաւական ընդարձակ էր։ Կը հանէ գրականէն տետրակ մը, կը կարգայ խոշոր անունները, զորս նշանակած էր կապարով, միանգամ յօնքերը կը սլուսէ, եւ թեթեւ վարանումէ մը ետքը, պատուելով տետրակէն այն թուղթը՝ բզիկ բզիկ կ'ընէ ու կը նետէ հովին առջեւ։ Սրբազանին ժպիտները, ձառագէժ ուրուականներու պէս, ցնցած էին զինքը եւ համոզած ալ իսպա՛ռ չգիմե սուրբերու։ — «Ատոնք մեր վրայ կը խըն՝ գան»... Գիշերը քանիցս իր շրթանց՝ վրայ միմտացել էին այդ բառերը, զորոլտողներէն ոչ ոք հետաքրքիր եղած էր հասկնալու։ «Երազ է», կ'ըսէին, ու կ'անցնէին։ Երազ...»

Բ

Երրորդ կիւրակէն Գատը-գիւղ կ'անցնի։ Իր ցաւազին տպաւորութիւնք բաւական թեթեւցած էին, զի առջի փորձին վրայ բաւական օրեր անցել էին. օդն ու ծովն ալ գեղածիժաղ էին։ Ս. Թադաւոր եկեղեցիէն ստակաւին ելած չէր ժամուորը։ Խաչ հանելով բազմութեան մէջ կը մտնէ։ Քանի մը վայրկեան ինքզինքը

կը մոռնայ պատկերներու եւ խաչերու առջեւ։ Իր մոմն ալ կը տնկէ Ս. Թադաւորի սոջեւ։ Թեթեւ մութն ու սեպացեալ բոցը, առանց սաղին անդին երերալու, ուղղակի ի վեր կը բարձրանային միանձնուհւոյ մը խնդրուածքին պէս։ Յաջորդութեան նշան էր այս։

Ատոնք ալ կ'աւարտին. «երթայք ի խաղաղութիւն»ի հետ Ֆարհատ դուրս կ'ելնէ և պիտի գնար։ Ո՛ւր,— Ո՛չ աղայի, ոչ սրբազանի և ոչ քահանայի։ Կնոջ մի դուռը պիտի գարնէր և ապահով ճամբան էր այս։ Կին մը անշուշտ աւելի զթոտ պիտի նայէր մօր մը նիւար ու վախ, աղտոտ ու պատառաստուն հագուած դաւկին, գէթ Սրբազանին ցուրտ ժպիտը չը պիտի նետէր իր դժբախտութեանը վրայ։ Հարցնելով կը գտնէ տունը. ներս կը մտնէ և վեր կը հրամցուի։ Տիկինը սեւեր հագած կին մըն էր. փոքրիկ մանկիկ մը, դանդաղահեր ու ոխուն, սենեկին բողբոկենդանութիւնը կը յօրինէր։ Իր այս ընդունելութեանը մէջ կային այնպիսի բաներ, որք անոր խօսելու համարձակութիւն կուտային. ո՛չ թէ կին, այլ մայր մը գտած էր հոն, գթութիւն իր լաթերուն ու խեղճ կերպարանքին վրայ, մայրենի անուշ խանդաղատանք, որ, կարծես աղաւնոյ մը թեւերով անոր կը փարէր։ Գանդրահեր մանկիկն եկաւ անդամ մը և Տիկինին գիրկն ինկաւ. մայրն համբուրեց զնա կաթոգին և յանկարծ ճերմակ թաշկինակը աչքերուն տարաւ։ Տառնելոց տարեկան պատանի, կ'ըսէր ինքնին, ուսման սէր ունեցած է ինքնայորդոր, մայր, քոյր, եղբայրներ թողնով եկած է հոս, և այդ տարիքէն սկսեալ ընկերութեան արհամարհանքը կը ծծէ թունաւոր ժահրին պէս։

Ֆարհատ, իր համառօտ կենսագրութիւնն ընելով, ուր Սրբազանին ժպիտները մեծ տեղ կը բռնէին, «Էջմիածնի ճեմարանը, Տիկին, հոն երթամ», վերջաբանը դրած էր քանիցս։ Անակնկալ էր այս. Էջմիածնի ճեմարան և այդ առիթով խեղճուկ ուղեկը, ինչպէս իրարու մօտեցած էին։ Տիկինը դպրոցին մէջ ընդունելութեան պայմաններուն վրայ կը խօսի, ուսմանց ծրագրի մասին տեղեկութիւն կուտայ հասկնալի լեզուաւ... և ինքզինքը

պատրաստ կը ցուցնէ՝ անոր օգնելու, միջնորդութեամբ և ճամբու ծախքերն հոգալով։ Ֆարհատ բաւական նստած էր արդէն, տեղեկութիւն տուած ու առած էր, և ալ բան մը չէր մնացած, ուստի հրաժեշտ ողջոյն տալով, դուրս կ'ելնէ ու կ'երթայ...

Սեւազգեստ Տիկինը պահ մը տխուր և մտածկոտ կը կենայ. իր մանկիկն ալ գիտես թէ բան մը զգացած էր. տժգոյն երես, դողդղացող ձայն, խնարհ կերպարանք, ազտոտ լաթեր և անյարգար գըլուխ՝ անոր մատղաջ ջիւղերուն վրայ ցաւ մը դրած էին դուցէ, — արդաւանութեան զգացումը. «Ի՞նչ օրէն սկսեալ քանի մը շարաթ ֆարհատի անունը մտցած չէր, և սակայն անգամ որ մօրը կուրծքին վրայ կը դնէր իր գանգրահեր գլխիկը, ըսած էր, «Մամա, ո՞ւր գնաց Ֆարհատ մայր չունի՞ր ան...» և կինը միշտ յուզուած էր ցաւագին՝ սպիտակ թաշկինակը աչքերուն տանելով։

Գ.

Շոգենաւը թող տուած էր. բազմաբոխ ժողովին մէջ ֆարհատ մէկ կողմ ծըրարուած՝ ինքզինքը կը մտնար. — «պէտք է քիչ մը ժամանակ Պօլիս մնամ, բան ու ման սովորիմ և յետոյ գնամ Էջմիածին քիչ մը բան ձեռք բերած»։ Այս և ուստեց նման խորհրդոց մէջ էր։ Բայց ի՞նչ պիտի ընէր, մանաւանդ որ սպրեկու համար, հարկ էր որ ծառայութիւն յանձն տանէր։

Փառը-գիւղ կը փոխադրուի. մէկ շաբաթի չափ Ելէ-Տէյրիմլիի կողմերը կը դեգերի, և իրիկուան մթնոն, մինչ մութը կը փութին, սահելով լռիկ դիշերաձեւ ստուերի մը պէս, կ'երթայ կը նետուի ծառերուն տակ և առաւօտուն կ'արթննայ թաշնոց ու հովին հետ, որք իր գլխուն վերեւ սաղարթուն ոստերը կ'երեքցնէին մեղմիկ։ Մաս, բնութիւն և խոտեր աւելի մարդասէր գտնուած էին։ Բայց ինք այդ տեղ չպիտի մնար, ծրագիր ունէր, նպատակ ունէր։ Յաջորդ երկուշաբթի մտած էր ֆրէրներուն դպրոցն իրեն օգնական տնտեսի, և այնուհետեւ փողոց փողոց մանրիկ տղայոց կարգեր կը տանէր։

Կոկիկ հայերէն կը խօսէր, հայ ուսանողներ, որք ֆրէրներու դպրոցը կը յաճախէին իրենց մօրը լեզուն մոռնալու համար, ուշադրութիւն մը կը դարձնեն այդ տախտի պատանոյն. ընտանեկան կ'ընեն, կը հարցնեն, կը դառնան, կը տեսնեն որ այդ դրոցի տղեկը չափով մը բանգէտ է, ուսանելու ալ յօժարութիւն ունի։ Այսպէս ֆարհատ ալ դուրս ելած էր մութէն իր տարեկից տղայոց մէջ, որոց մոկն մէկը առանձին հաճոյքներ ունէր օգնել այդ դրոցի տղուն։ Պէտք է խոստովանիլ որ ֆառը-գիւղի տղայք, տախտի հոգի վրայ, համեմատաբար աւելի կը սիրեն իրենց տախտի հայրենակիցները։ Ֆարհատ, ամառը քիչ մը թեթեւ, իսկ ձմեռը չարաչար տքնութեամբ կ'անցնէ. ֆրէրներն ալ, առանց բնաւ խրնայելու, փութելու մոմ կուտային. գաղղիկներն խօսելու կ'ընտանեցնեն, հայերէն և թուադիտութեան դասեր տալ կուտան։ Ճակատագիրն սկսած էր ժպտիլ մոկն կողմ։

Տառնէջորտ ամիս կ'անցնէ այն շէնքին ու ֆրէրներու շուքին տակ, ուր ոչ մէկ դէմքի վրայ նենգաւոր ժպտը տեսաւ. փորը կուշտ կ'ապրէր, կը զարգանար, կոկիկ ու մաքուր կը հագուէր, դրամ ալ ունեցաւ շնորհիւ մանաւանդ հայ ուսանողներու, որք առիթներ կ'ստեղծէին անոր օգնութիւններ ընելու համար. արդիւնաւոր Կաղանդ ու Զատիկ ունեցած էր, ճեմարանը մուցած չէր, և ամէն մէկ դասի, որով քայլ մը կ'առնէր դէպի անձանօթը, Էջմիածնի կը մօտենար, մանաւանդ որ իր դրամովը պիտի ճամբորդէր. ի՞նչ անսպաս հաճոյք, — բնաւ մարդու կարօտ չըլլաւ...

Դ.

Իր որոշած օրերը կ'սպասէին. հայ ուսանողք փոփոխութիւն մը սկսած էին նշմարել սիրելի ֆարհատին վրայ, որ, մերթ արտում, մերթ չափազանց ուրախ իր դէմքին վրայ սրտին բոլոր յուզումներն ի տես կը հանէր. — «քանի մը շարաթէն ձեմարանը պիտի գտնուիմ. իսկ եթէ չյաջողիմ»... Առանձնութեան մէջ կը կրկնէր տանք՝ առանց ուսմք բան մը հաղորդելու։ Կիրակի, մը կ'անուրս, զանգաղ-

ներու զօղանջէն ու գոչիւնէն առաջ, կ'արթննայ. ուխտով ճամբայ ելած էր, ուխտով պիտի սկսէր վերադառնալ, ուստի դարձեալ ի Ս. Թադաւոր, աղօթք, մոմ ու ջերմեռանդն երկրպագութիւն:

Ժամը երեքն եկած է. Տիկնոջ սենեակը կը մոնէ. մայր ու մանկիկ հոն էին, նոյն մթնոլորտն էր թեթեւ և դիւրատար: Ո՛րչափ որ ինքն իբրեւ ծանօթ կը մոնէր, Տիկինը չը ճանչեց զնա. ուստի հարկ եղաւ որ տեղեկութիւն տայ: «Ֆարհատը, Տիկին:—Ֆարհատ... ո՛րչափ փոխուել էք»: Իրաւ, մարմնով ու մտքով վերայ դրած էր, մաքուր ու կոկիկ հագուած, ազնիւ համարձակութիւն մը սրբած տարած էր այն նկո՛ւն խոնարհութիւնն, որ երբեմն տխրութեան հետ կը խառնուէին հոն: Երբեք ալ չերեւցար այն օրէն ետքը:—Ֆարհատ, իբրեւ պատասխան, իր Ալ ամենայ պատմութիւնը կ'ընէ, և Տիկինն ուշադրութեամբ մտիկ կ'ընէ, մերթ ապշած, մերթ ցաւած եւ փզճկած պտտանւոյն կեանքին այն մասին վրայ, զոր ծառերուն տակ նետած էր: Վերջապէս կը դնէր այսպէս. «Ճեմարան, էջմիածին, Տիկին. դրամի ալ պէտք չունիմ, կը խնդրեմ միայն որ ձեր միջնորդութիւնը չզլանաք ինձ»: Տիկինը միշտ պատրաստ էր անոր օգնելու, միայն թէ յանկարծ կասկածանք մը ունեցաւ անոր խոշորութեանը մասին, զի տարիքէն աւելի հասակը վրայ դրած էր: Այսու ամենայնիւ Տիկինը ետ չալիտի կենար: Ժաշի վար կը դնէ զնա, իրեն սեղանակից կը նստեցնէ զաւիկին պէս. Այդ օրն երկու զուակ ունեցած եղաւ, Օննիկի քով ֆարհատը: Ի վերջոյ Տիկինը յանձնարարական նամակ մը առ Ս. Մ. և Ֆարհատ հրաժեշտի ողջունիւ կը մեկնի:

— — —

է

Երեքշաբթի Ռուսական փոսթայով դուրս կ'ելնէ Պօլիսէն, ուր առաւապանքն ու յաջողութիւնը միապէս գտած էր. վերջին անգամ մըն ալ Սրբազանին ժպտաւ, իբրեւ դառն յիշատակ, կը թթուեցնէ զինքը. երեսը կը դարձնէ դէպի արեւելք, և ալ մոռցած էր ամէն բան...

Մէկ ամիս ետքը լուր տուինք որ ֆար-

հատ էջմիածին հասեր է: Ճեմարանն իր գոները կը փակէր անոր առջեւ. խոշո՛ր էր, ահաւասիկ անքաւելի յանցանքը: Աղաչանք, պաղատանք ոչինչ ընելու զօրած էին, միայն թէ Ս. Մ. Տիկնոջ նամակին յարգանք ընելու համար, Ֆարհատին կ'ըսէ որ վերջին անգամ զինքը տեսնելու գայ այս ինչ օր: Ֆարհատ որդեալ ժամէն մէկ քառորդ առաջ էջմիածինը կը մոնէ. գիրուկ մարդ մը դէմը կ'ելնէ կճատ մօրուք, միջին հասակ, պճրդնաւոր վերորդիւ մը հագած: Երեսը նայեցաւ, նոյն Սրբազանն էր, նոյն ժպտաւ երեսին վրայ. կը դառնայ ետ, և կ'երթայ անդարձ: Ո՛ւր է. ոչ ոք գիտցաւ այնուհետեւ:

Ս. Մ. կը դրէ. «Ազնիւ Տիկին, Պտոն Ֆարհատը, զոր յանձնարարական գրով զրկել էիք, կարելի չեղաւ ընդունել իբրեւ սան Ճեմարանում: Ես սրտանց ցաւում եմ: Ասացի նրան որ մեկնելէ առաջ ինձ տեսնէ. օր ու ժամ էլ որոշեցի: Իմ դիտաւորութիւնս էր մի բան սարքել և քիչ մը դրամով իր հայրենիքն ուղարկել. բայց նա չերեւցաւ, իր խօսքին դրժեց վատութեամբ: Ոչ ոք գիտէ թէ ո՛ւր է գնացել...»: Սրբազանը ներկայ դտնուած էր այս նամակին. և անոր ժպիտներուն տակ դրուած էին այս տողերը:

Ո՛ւր ես, ֆարհատ:

ՀՐԱՆԴ

— 0000 —

ՄԵՐ ՍՊԱՍԱԽՈՐՆԵՐԸ

Ահեհեհ չորս հինգ շարաթ առաջ իր մէկ խմբագրականովը կը յանձնարարէր տանտէրերուն և տանտիրուհիներուն որպէս զի օրը մէկ քանի ժամ դաս առնեն և այսպէս լրացնեն իրենց կրթութիւնը:

Գահութեամբ կը ծանուցանենք այժմ թէ այս մարդասիրական գաղափար ընդունուած է բաւական սուսերու մէջ և արդէն դործադրութեան մտած:

* *

Ճոխապէս կաշաւորեալ սենեկի մը մէջ, տանտիրուհիներ նստած է: Յանկարծ տանը դրանը զանգակը կը հնչէ: Տիկինը կ'ողտնէ ուշադիր, և սակայն վարէն դուռը բացող չի կայ: Ճարահատած, սանդուղին դուրսը կ'երթայ և կը կանչէ:

—Մա'րկոս, դուռը չի բանա՞նք, խո՛ւ ևս, չ'իմացա՞ր:

Մարկոս կ'երեւայ, գրիչ մը ականջին ետին խոթած և ձեռքը գիրք մը զոր ուշադրութեամբ կը կարդայ:

—Էյ ի՞նչ կը տնտնաս, չը բանա՞նք ծօ, կը գոչէ երկրորդ անգամ տիկինը:

—Հանձնմ, հայերէնի դաստառուն եկեր էր, դաս կ'առնէի կոր, կը պատասխանէ Մարկոս:

Եւ առանց աչքը գլխին վրայէն բաժնելու, դուռը կը բանայ և անմիջապէս նորէն վար կը վազէ:

Եկողը տիկին մըն է: Դրանը առջեւ այնչափ ատեն սպասելէն կրակ կտրած է, բայց չ'ընկած վրայ անուշ ժպիտով մը սանդուղէն կ'ելլէ և տանտիրուհւոյն հետ սրահը կը մտնեն:

Խօսակցութիւնը կ'սկսի: Քստորդ ժամը կ'անցնի, և տանտիրուհւոյն աչքը սրբաւորէն դուռն է անհամբերութեամբ: Անուշ կամ խաչուէ բերող չի կայ: Քովի սենեակէն դաշնամուրի մը աններդաշնակ ձայնը կը լսուի, կտրտուած շեշտերով:

—Ո՞վ է քեանքն չալովը, կը հարցնէ այցելու տիկինը: Աղջիկդ դպրոց չ'է՞ գացեր այսօր:

—Չէ՛, աղջիկս չէ, մեր սպասուհին է, Մարիամը, կը պատասխանէ տանտիրուհին, քեանքն դաս կ'առնէ կոր հիմա: Աս

ալ նոր ելաւ: Մեր Երուանդին գաղափարն է: Ամուսինս եւ ևս շատ դէմ կ'եցանք, բայց ինք անդէպ որ պէտք է ազդին համար զոհողութիւն ընել և օրինակ տալ ուրիշներուն որ այս գաղափարները տարածուին: Մեր Մարկոսն ալ դաս կ'առնէ:

Եւ տանտիրուհին դարձեալ յուսահատ նայուածք մը կը նետէ դէպի դուռը: Ա՛լ համբերութիւնն հասած է: Ոտքի կ'ելլէ, քովի սենեակը կ'երթայ և սպասուհւոյն մօտենալով,

—Աս ի՞նչ խաղքութիւն է, խաչուէ մը չի բերե՞ն:

—Ի՞նչ ընեմ, հանձնմ, կը պատասխանէ սպասուհին, հիմակ քեանքն դաստառն ու պիտի գայ, էհեհեհ կ'ընեմ կոր: Անկէ ետքն ալ դապղիբէնի դաստառն ու պիտի գայ, հրահանգները դեռ չեմ պատրաստեր:

—Ինչ օր է, հիմակ ատունք ձգէ խաչուէ մը բեր ներս:

Խաչուէն կուգայ վերջապէս: Սպասուհին, ափսէ ի ձեռին կը կանգնի սրահին դրանը մօտ: այլ, քիչ մը յետոյ, ափսէն թիկնաթուրի մը վրայ դնելով, գրպանէն ֆրանսերէն քերականութիւն մը կը հանէ և ակռայներուն տակէն կ'սկսի մալտալ բարձրաձայն:

Ժ'է,

թիւս,

իւս,

նոս զ'ալան,

վոս զ'ալան,

իւս զ'ալան:

Մինչ անդին, այցելու տիկինը խաչուէն շատոնց խմած լինացած, գաւաթն ի ձեռին կ'սպասէ յուսահատութեամբ: Վերջապէս, տանտիրուհւոյն մէկ խոփոռ նայուածքին վրայ, սպասուհին աջ ձեռքը կ'առնէ ափսէն, ձախովը միշտ գիրքը բռնած, կ'առնէ այցելու տիկնոջ դուռն ելլելու վրայ է, ետ կը դառնայ, թիկնաթուրին վրայ կը դնէ ափսէն, և տանտիրուհւոյն մօտենալով,

—Կը ներէք, հանձնմ, հիմա գաղափարէնի դաստառն ու պիտի գայ, քեանքն բայց պիտի զուրցեմ, աղէկ մը չեմ գիտեր:

